

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 06.06.2026թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Հեռ. (+374 10) 510 510,

www.inecobank.am

Լողացող տոկոսադրույքով հիփոթեքային վարկեր

Վարկառուի նկարագիր	ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ
Վարկառուի տարիք	Վարկառուի տարիքը վարկի ժամկետի ավարտին չի կարող գերազանցել 70 տարին: Համավարկառուի առկայության դեպքում նշված պահանջը վերաբերվում է վարկառուներից առնվազն մեկին:
Վարկավորման նպատակ	- անշարժ գույքի ձեռքբերում, այդ թվում գնման իրավունք - անշարժ գույքի կառուցապատում - անշարժ գույքի վերանորոգում - գործող հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում¹
Վարկի արժույթ	ՀՀ դրամ²,

¹ Բանկը կատարում է անշարժ գույքի գրավադրման, կադաստրային գրանցման հետ կապված բոլոր վճարումները եթե վերաֆինանսավորվող վարկի մնացորդային գումարը կազմում է 10,000,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավել գումար, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի գրավի իրավունքը հաճախորդը ցանկանում է գրանցել օրենքով նախատեսված ստանդարտ ժամկետից արագացված կարգով: Լրացուցիչ գույք/գույքերի առկայության դեպքում Բանկը կատարում է միայն մեկ լրացուցիչ գույքի հետ կապված վճարումները:

² ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հիփոթեքային վարկերը տրամադրվում են միայն ՀՀ դրամով: Միայն ՀՀ դրամով են վարկավորվում նաև այն ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր ունեն ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ համավարկառու:

	ԱՄՆ դոլար³
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:	
Վարկի ժամկետ	- գույքի ձեռք բերման և կառուցապատման համար - նվազագույնը 3 տարի - առավելագույնը 30 տարի - վերանորոգման համար - նվազագույնը 3 տարի - առավելագույնը 15 տարի
Վարկի գումար	- ձեռքբերման և կառուցապատման նպատակով - 3,000,000 – 80,000,000 ՀՀ դրամ - 6,000 – 160,000 ԱՄՆ դոլար - վերանորոգման նպատակով - 1,500,000 – 30,000,000 ՀՀ դրամ - 3000 – 60,000 ԱՄՆ դոլար
Կանխավճար	- առնվազն 20% - առնվազն 10%՝ Բանկի հետ համագործակցող կառուցապատող ընկերություններից անշարժ գույքի ձեռքբերման (գնման իրավունք) դեպքում կամ 0%, եթե ձեռք բերվող անշարժ գույքի հետ գրավադրվում է նաև այլ անշարժ գույք:
Տոկոսադրույքի տեսակը	Լողացող
Տարեկան անվանական տոկոսադրույք ՀՀ դրամով վարկերի համար⁴	- գույքի ձեռք բերման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 13.5%, այնուհետև՝ լողացող - վերանորոգման և կառուցապատման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 14.0%, այնուհետև՝ լողացող

3 ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ԱՄՆ դոլարով վարկը տրամադրվում է միայն «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակներից դուրս (Առևտրային/հասարակական/արտադրական և այլն նշանակություն ունեցող) անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման և կառուցապատման համար, ինչպես նաև ձեռքբերման, վերանորոգման կառուցապատման նպատակներով տրամադրված գործող հիփոթեքային վարկի վերաֆինանսավորման համար:

	Բանկային հաշվի «Ընթացիկ» սակագնային պլանին միացած հաճախորդների համար, ովքեր կստանան իրենց ամսական աշխատավարձը կամ եկամուտները⁵ Բանկում բացված հաշիվներով՝ • գույքի ձեռքբերման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 13%, այնուհետև՝ լողացող • վերանորոգման և կառուցապատման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 13.5%, այնուհետև՝ լողացող
Տարեկան անվանական տոկոսադրույք ԱՄՆ դոլարով վարկերի համար⁶	• գույքի ձեռքբերման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 10.5%, այնուհետև՝ լողացող • վերանորոգման և կառուցապատման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 11%, այնուհետև՝ լողացող Բանկային հաշվի «Ընթացիկ» սակագնային պլանին միացած հաճախորդների համար, ովքեր կստանան իրենց ամսական աշխատավարձը կամ եկամուտները⁵ Բանկում բացված հաշիվներով՝ • գույքի ձեռքբերման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 10%, այնուհետև՝ լողացող • վերանորոգման և կառուցապատման համար՝ առաջին 3 տարին չփոփոխվող՝ 10.5%, այնուհետև՝ լողացող
Տարեկան փաստացի տոկոսադրույք ՀՀ դրամով վարկերի համար	• գույքի ձեռքբերման համար՝ 13.95-18.71% • վերանորոգման և կառուցապատման համար՝ 14.52-23.15%
Տարեկան փաստացի տոկոսադրույք ԱՄՆ դոլարով վարկերի համար	• գույքի ձեռքբերման համար՝ 10.55-15.55% • վերանորոգման և կառուցապատման համար՝ 11.10-19.84%

⁵ Ամսական 250,000 ՀՀ դրամ և ավելի զուտ աշխատավարձ կամ եկամուտ ստանալու դեպքում:

⁶ Անկախ նշված չփոփոխվող տոկոսադրույքի մեծությունից, այն չի կարող փոքր լինել տվյալ պահին գործող 6 ամսական ԱՄՆ դոլարով SOFR-ի դրույքի ցուցանիշին գումարած 6 տոկոսային կետ մեծությունից:

Ձեռքբերվող կամ վերանորոգվող անշարժ գույքի և/կամ վարկառուի ու համավարկառուների (առկայության դեպքում) դժբախտ պատահարներից կյանքի ապահովագրության պահանջի առկայության դեպքում ապահովագրության իրականացումը հաճախորդի համաձայնությամբ կարող է ապահովվել Բանկի կողմից, որի դեպքում վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը ավելանում է 0.17 տոկոսային կետով յուրաքանչյուր տեսակի ապահովագրության համար: Բանկն ապահովում է ապահովագրության իրականացումը պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում՝ բացառությամբ վարկի ժամկետի առաջին տարվա, որն ապահովում է հաճախորդը:	
ԼՈՂԱՅՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է ՈՉ ՀԱՃԱԽ ՔԱՆ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ: ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ/ԻՋԵՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է՝ • ՀՀ ԴՐԱՄՈՎ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝ +/- 1,5 ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿԵՏ • ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՎԱՐԿԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝ +/- 1 ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿԵՏ	
ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՑԵԼ 25/02/2022Թ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ՝ ԿԱԽՎԱԾ ՀՀ ԿԲ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ ԷՋՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԻՑ:	
Վարկավորման համար Բանկում վճարման ենթակա գումարները	1. Հաշվի բացման վճար՝ համաձայն համապատասխան բանկային հաշվի սակագնային պլանի 2. Հաշվից կանխիկացման միջնորդավճար ՀՀ դրամով վարկերի դեպքում՝ • Կանխավճարի գումարը՝ 0% • Վարկի գումարը՝ · ձեռքբերման դեպքում՝ 0% · վերանորոգման և կառուցապատման դեպքում՝ համաձայն համապատասխան բանկային հաշվի սակագնային պլանի ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝ • Կանխավճարի գումարը՝ 0% • Վարկի գումարը՝ 3%

	3. Հաշվի սպասարկման լրացուցիչ միանվագ վճար (գանձվում է վարկի տրամադրման պահին) 0.5% վարկի գումարից, բայց ոչ պակաս քան 60 000 ՀՀ դրամ
Վարկի մարում	վաղաժամկետ Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին ՀՀ օրենքի շրջանակներում տրամադրվող հիփոթեքային վարկերի պայմանագրային տարվա որևէ պահի վաղաժամկետ մարում կարող է իրականացվել այդ պայմանագրային տարվա համար մարման ժամանակացույցով նախատեսված վարկի մայր գումարի չափով: Պայմանագրային տարի է համարվում կրեդիտավորման պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը, նշված գումարից գերազանցելու դեպքում՝ - վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.6 տոկոսի չափով տուգանք, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում, - վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.4 տոկոսի չափով տուգանք, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում, - վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.2 տոկոսի չափով տուգանք, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում: Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին ՀՀ օրենքի շրջանակներից դուրս (առևտրային/հասարակական/արտադրական և այլն նշանակություն ունեցող անշարժ գույքի համար) տրամադրվող հիփոթեքային վարկերի դեպքում կարող է կիրառվել տույժ՝ վաղաժամկետ մարվող գումարի մինչև 5%-ի չափով:

Ժամկետանց պարտավորությունների մարում	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ 0.13 ⁷ տոկոսի չափով՝ սկսած ուշացման առաջին օրվանից:
Վարկավորման համար երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունների վճարներ	Գույքի գնահատման վճար 15.000-25.000 ՀՀ դրամ Միասնական տեղեկանք - Մինչև-10.000 ՀՀ դրամ Նոտարական վավերացման վճարներ 15.000-40.000 ՀՀ դրամ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վճար 45,000 ՀՀ դրամ Գրավի պետական գրանցման վճար - Մինչև 45.000 ՀՀ դրամ Նոտարական փաթեթներում առկա հայտարարություն/համաձայնություն - Ամուսնացած լինելու դեպքում՝ կնոջ/ամուսնու համաձայնություն՝ 8.000 ՀՀ դրամ - Ամուսնացած չլինելու դեպքում՝ ամուսնացած չլինելու վերաբերյալ հայտարարություն՝ 1.500 ՀՀ դրամ Գույքի ապահովագրության վճար⁸ 0.15%-0.2% վարկի գումարից Դժբախտ պատահարներից ապահովագրության վճար⁸ 0.15%-0.21% վարկի գումարից
Բանկի կողմից տրամադրվող համաձայնությունների միջնորդավճար	10,000 ՀՀ դրամ

⁷ Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում:

⁸ Կիրառելի է, եթե ապահովագրության իրականացումը և վերակնքումը ապահովում է Հաճախորդը:

ԱՆԿԱԽ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻՑ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՅ ՎՃԱՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ: ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ և ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՎՃԱՐՆԵՐԸ ՆԵՐԱՌՎԱԾ ՉԵՆ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ, ՔԱՆԻ ՈՐ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎՃԱՐՄԱՆ՝ ԱՆԿԱԽ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ ԿՐԵԴԻՏՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ ԿՐԵԴԻՏԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ:	
Ապահովվածություն	• ձեռք բերվող, կառուցվող, վերանորոգվող/վերակառուցվող անշարժ գույք և/կամ այլ անշարժ գույք (Օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան) • Գնման իրավունքի գրավ⁹
Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	Ձեռքբերման և կառուցապատման դեպքում՝ ՀՀ դրամ- 80%¹⁰, ԱՄՆ դոլար-70% Վերանորոգման դեպքում՝ 70%¹¹ <i>Անշարժ գույքի ձեռքբերման դեպքում վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկելիս հիմք է ընդունվում գույքի շուկայական և գնման արժեքներից նվազագույնը, իսկ կառուցապատման, վերանորոգման, որպես լրացուցիչ գրավ գրավադրվող անշարժ գույքի դեպքում՝ գույքի շուկայական արժեքը:¹²</i>
Ապահովագրություն	Կարող է պահանջվել գույքի և դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ վարկի մնացորդի չափով:

⁹ Միայն Բանկի հետ համագործակցող կառուցապատող ընկերություններից անշարժ գույքի ձեռքբերման (գնման իրավունք) դեպքում:

¹⁰ Բանկի հետ համագործակցող կառուցապատող ընկերություններից անշարժ գույքի ձեռքբերման (գնման իրավունք) դեպքում վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը կարող է սահմանվել մինչև 90%:

¹¹ Եթե Բանկում առկա է կամ տրամադրում է նույն գույքով ապահովված ձեռքբերման կամ կառուցապատման նպատակով տրամադրված իփոթեքային վարկ՝ մինչև 80%

¹² Կարող է հիմք ընդունվել նաև այլ արժեք, եթե վարկը հաստատող մարմնի կարծիքով վարկ/գրավ հարաբերակցության հաշվարկման համար հիմք ընդունվող վերոնշյալ արժեքները լիարժեք չեն արտացոլում գրավի իրական արժեքը:

Երաշխավորություն	Կարող է պահանջվել ընտանիքի անդամների, այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց երաշխավորություն
ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՎՃԱՐԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՓՈԽԱՐԵՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և ՀՆԱՐԱՎՈՐ Է՝ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ:	
Տրամադրման եղանակ	Միանվագ կամ մասնաբաժիններով, անկանխիկ եղանակով
Մարման եղանակ	- անուիտետ (մայր գումարի և տոկոսագումարների ամսական հավասարաչափ մարումներ) - դիֆերենցված (մայր գումարի հավասարաչափ և տոկոսագումարների ամսական մարումներ)
Վարկի տրամադրման որոշման կայացման ժամկետ	Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 2-5 աշխատանքային օր, որից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հաճախորդին
Վարկի տրամադրման ժամկետ	Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց և Վարկառուի/երաշխավորի կողմից առաջարկը հաստատելուց հետո՝ 7-10 աշխատանքային օր
Տոկոսագումարների հաշվարկման կարգ	տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի վրա՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից
Վարկի պայմանների վերանայման միջնորդավճար	20,000 ՀՀ դրամ
Լողացող տոկոսադրույքի հաշվարկման և վերանայման պայմաններն ու կարգը	Լողացող տոկոսադրույքը հավասար է հղման տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի գումարին: Հղման տոկոսադրույքը՝ Առաջնային ցուցանիշներ ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx ինտերնետային կայքում:

	- ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար օրական SOFR-ի տոկոսադրույքի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվանշանի ճշգրտությամբ: SOFR տոկոսադրույքը որոշվում է Նյու Յորքի Դաշնային Պահուստային Բանկի կողմից հրապարակված տվյալների հիման վրա, որոնք կարող են հասանելի լինել https://www.newyorkfed.org/markets/reference-rates/sofr ինտերնետային կայքում: Երկրորդային ցուցանիշներ - ՀՀ դրամով վարկերի դեպքում ՀՀ ԿԲ կողմից սահմանվող միջբանկային ռեպո դրույքը: Հրապարակվում է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ https://www.cba.am ինտերնետային կայքում: - ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում Նյու Յորքի Դաշնային Պահուստային Բանկի (Federal Reserve Bank of New York) կողմից սահմանվող EFR (Effective Federal Funds Rate) ցուցանիշը, որը հրապարակվում է https://www.newyorkfed.org/markets/reference-rates/effr ինտերնետային կայքում: Ֆիքսված կոմպոնենտը՝ Որոշվում է սահմանված չփոփոխվող տոկոսադրույքից նվազեցնելով վարկի տրամադրման որոշման կայացման օրվա դրությամբ (իսկ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝ նախորդ օրվա դրությամբ) ՀՀ դրամով վարկերի դեպքում գործող 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի ցուցանիշը, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում՝ օրական SOFR-ի տոկոսադրույքի վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը Տոկոսադրույքի վերանայում՝ Տոկոսադրույքը պարտադիր ենթակա է վերանայման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված Հղման տոկոսադրույքի և գործող Հղման տոկոսադրույքի¹³
--	--

¹³ Լողացող տոկոսադրույքի առաջին վերանայման ժամանակ, գործող Հղման տոկոսադրույքի փոխարեն հիմք է ընդունվում վարկի չփոփոխվող տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի տարբերության ցուցանիշը:

	տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետից ավելի: Բանկը տոկոսադրույքների փոփոխության նշված պարտավորությունն ունի և՛ դրական, և՛ բացասական շեղման դեպքում: Հղման տոկոսադրույքի մինչև 0,5 տոկոսային կետը ներառյալ փոփոխության դեպքում վարկի տոկոսադրույքը չի վերանայվում: Լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից վերանայվում է տարին 2 անգամ՝ փետրվար 15-ին և օգոստոս 15-ին: Նշված օրերը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը՝ հիմք վերցնելով լողացող տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած վերոնշյալ ցուցանիշների վերջին 6 ամսվա միջին ցուցանիշը: Վերանայվելու դեպքում նոր տոկոսադրույքը ուժի մեջ է մտնում վերանայման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:
--	---

Այլ դրույթներ

1. Վարկային պայմանագիրը կնքելուց առնվազն 7 օր առաջ Բանկի կողմից հաճախորդին է տրամադրվում վարկային պայմանագիր կնքելու առաջարկը և վարկային պայմանագրի նախագիծը: Վարկային պայմանագրի առաջարկը ուժի մեջ է 7 աշխատանքային օր՝ հաճախորդին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
2. ԲԱՆԿԸ ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05-Ի, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՁ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:
3. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԻՆԵԿՈԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ (www.inecobank.am) «ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ԷՋՈՒՄ:
4. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՆԱԳԱՆՁՎԵԼ, ԻՍԿ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

5. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԱՇՎԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼԻՍ ԳՐԱՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:

6. Վարկի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի ցանկ.

Մինչև վարկի հաստատումը, հայտ լրացնելու համար՝

- Գնորդ և կամ Գրավատու

- ✓ Վարկառու/գնորդի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ), չունենալու դեպքում՝ տեղեկանք ՀԾՀ չունենալու վերաբերյալ,

- ✓ Ամուսնացած կամ ամուսնալուծված լինելու դեպքում կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ) և դատարանի որոշում, եթե ամուսնալուծվել է դատարանով,

- ✓ Ամուսնության վկայական (եթե ամուսնացած է), ամուսնալուծության վկայական (եթե ամուսնալուծված է) կամ մահվան վկայական (եթե այրի է), (եթե գույքը ձեռք է բերվել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը),

- ✓ Անշարժ գույքի նախնական գնահատում (անշարժ գույքի գնման իրավունքի և գնման իրավունքի գրավի դեպքում ըստ պահանջի),

- ✓ տեղեկանք գնորդի աշխատանքի վայրից՝ եկամուտների հիմնավորմամբ (բլանկով, կլոր կնիքով, ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ); բիզնեսի առկայության դեպքում՝ իրավաբանական և ֆինանսական փաստաթղթերը,

- ✓ վերանորոգման դեպքում՝ նախահաշիվ,

- ✓ կառուցապատման դեպքում՝ նախահաշիվ, նախագիծ, շինարական թույլտվություն

- ✓ անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:

- Վաճառող (ֆիզիկական անձ)

- ✓ Վաճառողի(ների) անձը հաստատող փաստաթուղթ (ծննդյան վկայականները, եթե կան անչափահասներ) և հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ) (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ), չունենալու դեպքում՝ տեղեկանք ՀԾՀ չունենալու վերաբերյալ,

- ✓ Ամուսնացած կամ ամուսնալուծված լինելու դեպքում կնոջ/ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ) և դատարանի որոշումը, եթե ամուսնալուծվել է դատարանով,

- ✓ Ամուսնության վկայական (եթե ամուսնացած է), ամուսնալուծության վկայական (եթե ամուսնալուծված է) կամ մահվան վկայական (եթե այրի է), (եթե գույքը ձեռք է բերվել ամուսնությունից հետո կամ մինչև ամուսնալուծվելը),
- ✓ Վաճառվող անշարժ գույքի սեփականության վկայականի պատճենը և սեփականության իրավունքը հավաստող հիմքերը (օրինակ՝ առք ու վաճառքի պայմանագիր, ժառանգություն, քաղսովետի որոշում և այլն),
- ✓ Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:
 - Վաճառող (իրավաբանական անձ)
- ✓ Կանոնադրություն (բոլոր փոփոխություններով),
- ✓ Ղեկավարների և բաժնետերերի անձը հաստատող փաստաթղթեր և հանրային ծառայությունների համարանիշներ (Հանրային բազայում առկայության դեպքում (ծրագրային ստուգում) պարտադիր չէ),
- ✓ Վաճառողի իրավասու մարմնի որոշումը վաճառելու վերաբերյալ (ըստ անհրաժեշտության),
- ✓ Այլ բանկում հաշվեհամարի վերաբերյալ տեղեկանք (եթե Բանկում հաշիվ չունի),
- ✓ Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:

Վարկի հաստատման հետո

- ✓ Միասնական տեղեկանք գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ,
- ✓ Ապահովագրություն (ըստ Բանկի պահանջի),
- ✓ Անշարժ գույքի գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ (զրոյական) տեղեկանք (բացառությամբ անշարժ գույքի գնման իրավունքի և գնման իրավունքի գրավի),
- ✓ Վերջնական գնահատման հաշվետվություն, (բացառությամբ անշարժ գույքի գնման իրավունքի և գնման իրավունքի գրավի),
- ✓ Հատակագիծ (անշարժ գույքի գնման իրավունքի և գնման իրավունքի գրավի դեպքում),
- ✓ Բնակարանների ներքին հարդարման բնութագիր (անշարժ գույքի գնման իրավունքի և գնման իրավունքի գրավի դեպքում),
- ✓ Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:

7. Վարկի տրամադրման դրական որոշման գործոններն են՝

- կայուն եկամտի աղբյուր,
- խնայողությունների առկայություն,
- դրական կամ չեզոք վարկային պատմություն,
- գրավի առարկայի համապատասխանություն Բանկի կողմից ընդունելի չափանիշներին,

• արժանահավատ և լիարժեք փաստաթղթեր:

8. Վարկը մերժելու գործոններն են՝

- վարկը մարելու համար անբավարար եկամուտներ
- հաճախորդի եկամտի աղբյուրի դիսկային ոլորտ,
- անշարժ գույքի գնորդն ու վաճառողը միևնույն ընտանիքի անդամներ են,
- բացասական վարկային պատմություն,
- հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում:

9. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից «Ծանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ (նման պահանջի առկայության դեպքում):

10. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

11. Վարկը ձևակերպվում է Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում:

12. Վարկային և գրավի պայմանագրերը պետք է վավերացվեն նոտարական կարգով: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման:

13. Գրավադրվող անշարժ գույքի գնահատումն իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող անկախ ընկերությունների կողմից:

14. Գրավադրվող անշարժ գույքի ապահովագրությունն իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից:

15. Լողացող տոկոսադրույքով հիփոթեքային վարկերի ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:

16. Բանկի հետ համագործակցող կառուցապատողների ցանկին կարող եք ծանոթանալ Ինեկոբանկ ՓԲԸ պաշտոնական կայքում՝ www.inecobank.am:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱՅՎԵԼ ԻՆԵԿՈՐՔԱՆԿ ՓԲԸ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹԳԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ծառայություն	Սակագին
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում փոստով (ամսական)	- ՀՀ տարածքում՝ անվճար - ՀՀ տարածքից դուրս՝ 2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը
Հաշվի քաղվածքի տրամադրում էլ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում ¹⁴	- մինչև 1 տարվա վաղեմության- 1,000 ՀՀ դրամ 1 տարուց ավել վաղեմության- 3,000 ՀՀ դրամ
Քաղվածքի տրամադրման ժամկետ	Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել իր Հաշվի վերաբերյալ Հաշվի քաղվածք՝ գանձելով Հաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (մինչև 3 տարի վաղեմության)	Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ

¹⁴ Այս կետը չի վերաբերվում հիփոթեքային կրեդիտավորման շրջանակներում տրամադրվող քաղվածք/տեղեկանքներին, քանի որ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն տարեկան 4 անգամ Բանկը պարտավորվում է հաճախորդներին քաղվածք/տեղեկանքները տրամադրել՝ անվճար:

	Գործարքների մանրամասների (այդ թվում արագ դրամական փոխանցումների համակարգերով) վերաբերյալ ¹⁵ - 3,000 ՀՀ դրամ
	Վարկերի և դրանց ապահովությունների վերաբերյալ ¹⁶ - 5,000 ՀՀ դրամ ¹⁷
	Եկամտային հարկի փոխհատուցում ստանալու նպատակով հիփոթեքային վարկի և հիփոթեքային վարկի ծրագրային համապատասխանության վերաբերյալ տեղեկանք – անվճար
	Այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում ¹⁸ - 10,000 ՀՀ դրամ
Տեղեկանքի տրամադրման ժամկետ	Առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում

Ձեր ֆինանսական տեղեկատուն

«Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ WWW.FININFO.AM, ֆԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՂ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԴՐՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ և այլ Համակարգեր՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու:

¹⁵ 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

¹⁶ 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում, կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

¹⁷ Համաձայնությունների սակագները կարգավորվում են համաձայն վարկավորման սակագների:

¹⁸ Ժամկետանց վարկերի վերաբերյալ տեղեկանքների տրամադրման համար սույն կետով սահմանված սակագները չեն կիրառվում. տվյալ ծառայության համար կարող է գանձվել միջնորդավճար՝ պարտավորության չափի 10%-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

Համակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել Հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ Համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

2. Համակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Հաճախորդների համար: Հաճախորդին համապատասխան Համակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Հաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Համակարգի տրամադրման պայմանագիր՝ Հիմնական պայմաններին համապատասխան: Համակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Հիմնական պայմանները, Սակագները, համապատասխան Համակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:

3. Կողմերն ընդունում են, որ Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Հաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Համակարգերի միջոցով Հաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:

4. Կողմերն ընդունում են, որ Հաճախորդին նույնականացնելուց հետո Համակարգ մուտք գործելու համար Հաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Հաճախորդի կողմից Համակարգ մուտք գործելուց հետո Համակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Հաճախորդի կողմից: ԻնեկոՕնլայն Համակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:

5. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:

6. ԻնեկոՕնլայն, ԻնեկոՄոբայլ և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թղթեներ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է

անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:

7. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:

8. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված Վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:

9. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

10. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ծայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:

11. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

12. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

Վարկային պատմության և վարկային սքորի էությունն ու բարելավման ուղղությունները

Վարկային պատմություն

Վարկային պատմությունը հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է: Վարկային պատմությունը կարող է ազդել վարկի գծով որոշումների կայացման վրա և ներառում է առնվազն 5 տարվա վաղեմությամբ տեղեկատվություն:

Վարկային պատմությունը ներառում է՝

- հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների չափի, տարեկան տոկոսադրույքի, պարտավորությունների մնացորդի, դրանց դիմաց գրավադրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների գծով վճարների պատմությունը, ներառյալ սահմանված ժամանակացույցից վճարումների ուշացումները
- Այլ անձանց տրված երաշխավորությունները
- Հաճախորդին փոխկապակցված անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը

Վարկային պատմության վերաբերյալ հաճախորդն առավել մանրամասն կարող է ծանոթանալ այցելելով՝ <https://www.abcfinance.am>, [Հաճախ տրվող հարցեր - ԱԲՖԱ \(acra.am\)](#) և www.acra.am կայքեր:

Վարկային պատմության մեջ սխալների ու թերությունների հայտնաբերման դեպքում պարզաբանման և ուղղման նպատակով հաճախորդները կարող են այդ մասին տեղեկացնել վարկային բյուրոյին կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվությունը վարկային բյուրո փոխանցած ֆինանսական կազմակերպությանը:

Վարկային սքոր

Վարկային սքորը հաճախորդի սպասարկած պարտավորությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատական է, որը ցույց է տալիս տվյալ հաճախորդի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում:

Բանկը մանրաձախ վարկավորման ոլորտում հաճախորդների վարկարժանության գնահատման համար օգտագործում է սեփական սքորինգային համակարգը:

Սքորի հաշվարկման հիմքում ընկած են հետևյալ գործոնների խմբերը՝

- Հաճախորդի վարկային պատմությունը (վճարումների ուշացումները նվազեցնում են սքորը)
- Հաճախորդի զբաղվածության և եկամտի վերաբերյալ տեղեկատվությունը (բացակայությունը նվազեցնում է սքորը)
- Հաճախորդի սոցիալական և վարքագծային այլ գործոնները (ունեն սքորի վրա ինչպես դրական այնպես էլ բացասական ազդեցություն, կախված գործոնի տեսակից և արտահայտման ձևից)

Վարկային պատմության և սքորի բարելավման ուղղություններ

Հաճախորդները իրենց վարկային պատմության և սքորի բարելավման համար պետք է՝

- իրականացնեն իրենց ստանձնած պարտավորությունների գծով վճարումները ժամանակացույցին համաձայն
- խուսափեն վարկային ծանրաբեռնվածությունից և չհիմնավորված նոր վարկային հայտերից
- խուսափեն անվստահելի երրորդ անձանց երաշխավորությունների տրամադրումից:

Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերություններ

Անվանում	Հասցե	Հեռախոսահամար	Վեբ կայք/Էլ. հասցե
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, 0010 ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք՝ 47, 48, 50	(+37410) 59 21 21	info@ingoarmenia.am http://www.ingoarmenia.am
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան Վ. Սարգսյան 10, տարածք 110 «Պիացցա Գոանդե» Բիզնես Կենտրոն	(+ 374 60) 50 00 60	nairi@nairi- insurance.am http://www.nairi- insurance.am
«ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0014, Կոմիտասի պող. 62 շ., 93- 93/1:	(+ 374 60) 27 57 57	info@reso.am http://www.reso.am
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արամի 3	(+ 374 60) 54 00 00 (+374 10) 58-00-00	info@silinsurance.am http://www.silinsuranc e.am

«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1 (Նորդ ԲԿ-ի 4-րդ հարկ)	(+37410) 50 07 70	http://www.rgs.am
«ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, 0033, Հր.Քոչար 35/1	(+37410) 700 800	https://www.efes.am

Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպություններ

Անվանում	Հասցե	Հեռախոսահամար	Վեբ կայք/Էլ. հասցե
ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ք. Երևան 0001, Թումանյան 8, 215-216 սեն.	(+374 10) 54 27 40 (+374 10) 54 27 50 (+374 10) 54 27 60 (+374 10) 54 27 70 (+374 91) 54 27 50 (+374 77) 54 27 50 (+374 55) 54 27 50	info@olivergroup.am http://www.olivergroup.am
ԿՈՍՏ ԿՈՆՍԱԼՏ ՍՊԸ	Հայաստան, 0010, Երևան, Խանջյան փող., 13/2 շենք	(+374 10) 54 48 82 (+374 91) 47 19 25	info@cost.am cost@consultant.com http://www.cost.am
ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ք. Երևան, Արցախի պողոտա 23/6 շենք տաղավար 50 /Տուն Դեպոյի հարևանությամբ/	(+374 10) 43 22 76 (+374 96) 43 22 76	amintasgroup@mail.ru
ՎԻ ԷՄ- ԱՐ ՓԻ ՍՊԸ	Հայաստան, 0010, Երևան Վարդանանց փող. փակուղի, 8 շենք	(+374 10) 58 87 97 (+374 99) 58 87 97	vm-rp@mail.ru http://www.vm-rp.am
ԱՓԹԱՅՄ ՍՊԸ	Հայաստան, 0002, Երևան Եկմալյան փող., 6 շենք, 3-րդ	(+374 60) 53 53 71 (+374 98) 53 53 14 (+374 94) 71 37 10	-

	հարկ («Բիզնես Պալեի» շենքում)		
--	----------------------------------	--	--